«ԷՎՈԿԱԲԱՆԿ»-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Սույն կանոնների մեջ օգտագործվող հիմնական հասկացությունները.

1.1 **Կազմակերպիչ կամ Բանկ** – «Էվոկաբանկ» ՓԲԸ

1.2 **Խաղարկություն** – գովազդային վիճակախաղ, որտեղ պատահականության սկզբունքով ընտրվելու են շահող մասնակիցներ

1.3 **Մրցանակ** – այն շահումը, որը տրամադրվելու է մասնակցին

1.4 **Մասնակից** – այն հաճախորդը, ով բավարարում է սույն պայմաններով սահմանված բոլոր կանոններին

1.5 **Կանոններ** – Բանկի կողմից սույն խաղարկության մասով նշված պայմաններ

1.6 **Ժամկետ** – 07.03.2025 (Երևանի ժամանակով ժամը 00:00-ից) մինչև 07.04.2025թթ (Երևանի ժամանակով ժամը 23:59-ը) ընկած ժամանակահատված

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.

2.1 Խաղարկությունը կազմակերպվում է «Էվոկաբանկ» ՓԲԸ – ի (այսուհետ՝ Բանկ կամ կազմակերպություն) կողմից:

2.2 Խաղարկությանը մասնակցելու դեպքում մասնակիցը ընդունում է սույն պայմանները և կանոնները:

3. ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.

3.1. ՀՀ քաղաքացիները (այսուհետ՝ Քարտի պատվիրատու), ովքեր Ժամկետի ընթացքում կպատվիրեն Բանկի Mastercard Digital Gift քարտեր կամ Evoca Gift քարտեր, կմասնակցեն խաղարկությանը, որտեղ մրցանակը կլինի 10 հատ 30,000 ՀՀ դրամի Mastercard Digital Gift քարտ:

3.2. Խաղարկությանը մասնակցում են բոլոր Mastercard Digital Gift Card քարտերի պատվիրատուները և այն ArCa Evoca Gift քարտ պատվիրողները, որոնց նվեր քարտի գումարը մեծ կամ հավասար է 50.000 ՀՀ դրամ:

4. ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.

4.1 Խաղարկությանը մասնակցելու համար, անհրաժեշտ է Ժամկետի ընթացքում նվիրել նվեր քարտեր.
- Mastercard Digital Gift քարտեր ցանկացած գումարի չափով կամ
- 50 000ՀՀ դրամ կամ ավել արժողությամբ ArCa Evoca Gift քարտեր:
4.2 Mastercard Digital Gift կամ ArCa Evoca Gift քարտեր հնարավոր է պատվիրել https://www.evoca.am/hy/ կայքի կամ EvocaTOUCH ի միջոցով:
4.3 Mastercard Digital Gift Քարտի պատվիրատուները խաղարկությանը մասնակցում են նվեր քարտի պատվիրման ժամանակ իրենց էլեկտրոնային հասցեին ստացած քարտի պատվերի ունիկալ կոդով, իսկ Evoca Gift Քարտերի պատվիրատուները՝ ArCa Evoca Gift քարտի վերջին 6 թվերով:

5. ՄՐՑԱՆԱԿՆԵՐ.

5.1 Խաղարկությունը կազմակերպվելու է Քարտի պատվիրատուների համար, իսկ մրցանակը լինելու է՝
- 10 հատ 30,000 ՀՀ դրամ Mastercard Digital Gift քարտ:

6. ԽԱՂԱՐԿՈՒԹՅՈՒՆ.

6.1. Խաղարկությունը տեղի կունենա պատահականության սկզբունքով
6.2. Խաղարկությունը հեռարձակվելու է ուղիղ եթերում Բանկի Facebook-յան պաշտոնական էջում, իսկ խաղարկության տեսաձայնագրությունը տեղադրվելու է Բանկի պաշտոնական Youtube-յան ալիքում:
6.3. Յուրաքանչյուր քարտի պատվեր դիտարկվելու է առանձին: Նույն Քարտի պատվիրատուի Ժամկետի ընթացքում պատվիրած նվեր քարտերի գումարները իրար չեն գումարվում և մեկ հանրագումարով խաղարկությանը չեն մասնակցում:
6.4. ՈՒղիղ եթերի ժամանակ հայտարարվելու են Հաղթող մասնակցի էլեկտրոնային հասցեին ուղարկված ունիկալ կոդերը կամ ArCa Evoca Gift քարտերի դեպքում՝ քարտի վերջին 6 թիվը:
6.5. Բանկը 72 ժամվա ընթացքում առնվազն 3 անգամ փորձելու է կապ հաստատել հաղթող Մասնակցի հետ Նվեր քարտի պատվերի ժամանակ տրամադրած հեռախոսահամարով:
6.6. Բանկը հաղթող Մասնակցի Mastercard Digital Gift քարտի ակտիվացման համար վերջինիս էլեկտրոնային հասցեին ուղարկելու է հղում: Ընդ որում նվեր քարտի ակտիվացման համար հաղթող մասնակիցը պարտավորվում է ներբեռնել

Evoca Touch մոբայլ հավելվածը, գրանցվել մոբայլ հավելվածում և ակտիվացնել թվային նվեր քարտը:

7. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ.

7.1. Հաղթող հաճախորդը նվեր ստացած Mastercard Digital Gift քարտը կարող է ակտիվացնել և օգտագործել 6 ամսվա ընթացքում:

7.2. Mastercard Digital Gift քարտը 6 ամսվա ընթացքում չակտիվացվնելու դեպքում գործում են Mastercard Digital Gift քարտի պայմաններով սահմանված գործընթացները:

7.3. Մրցանակները դրամական միջոցներով փոխարինելու հնարավորություն չի տրամադրվում:

7.4. Mastercard Digital Gift քարտը այլ անձի փոխանցման ենթակա չէ:

7.5. Բանկը պատասխանատու չէ Քարտի պատվերի ժամանակ Քարտը պատվիրող հաճախորդի կողմից տրամադրված սխալ կոնտակտային տվյալների համար:

7.6. Բոլոր այն դեպքերում, երբ Բանկի կամիքից անկախ դեպքերում Հաճախորդը չի կարողանում օգտագործել՝ ակտիվացնել Mastercard Digital Gift քարտը և/կամ ակտիվացումից հետո ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Հաճախորդի դրամական միջոցների վրա կիրառվում է արգելադրում, ապա Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում այդ Հաճախորդի խաղարկությանը չմասնակցելու մասով: